Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի
2026թ. օգոստոսի 25-ի թիվ 0792-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար **2026 թվականի սեպտեմբերի 29-ին** Սիսիանի համայնքապետարանի շենքում /ք. Սիսիան, Սիսական 31/ կանցկացվի մրցույթ հետևյալ պաշտոնների համար՝

1. **Ժամը 11:00-ին** - աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-29), աշխատավարձի չափը կազմում է 201000/երկու հարյուր մեկ հազար/ՀՀ դրամ.
2. **Ժամը 14:00-ին** - աշխատակազմի քաղաքաշինության բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-32), աշխատավարձի չափը կազմում է 201000 /երկու հարյուր մեկ հազար/ՀՀ դրամ.
3. **Ժամը 16:00-ին** - աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-23), աշխատավարձի չափը կազմում է 201000 /երկու հարյուր մեկ հազար/ՀՀ դրամ:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցողները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

Դիմողքաղաքացիները Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝ բնօրինակների հետ միասին.

1) գրավոր դիմում (ՁԵ 1).
2) քաղաքացու դեպքում՝ անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն, իսկ փախստականի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության փախստականի կարգավիճակը հավաստող փաստաթղթի պատճեն.
3) դիպլոմի լուսապատճեն.
4) առնվազն միջնակարգ կրթության պահանջի դեպքում՝ կրթությունը հավաստող փաստաթուղթ (ատեստատ).
5) աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի պատճեն.
6) արական սեռի անձինք ներկայացնում են զինվորական գրքույկի (բոլոր գրառում ունեցող էջերի լուսապատճեն) կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն.
7) մեկ լուսանկար՝ 3x4սմ չափսի.
8) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Կառավարության որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը.
9) հայտարարություն այն մասին, որ անձը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
10) հայտարարություն այն մասին, որ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չեն.
11) հայտարարություն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվին (լեզուներին) տիրապետելու մասին:

Համաձայն ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2025թ. դեկտեմբերի 23-ի թիվ 126-Ն որոշման՝ մրցույթին մասնակցելու համար սահմանված է 3000ՀՀ դրամ վճար:

Մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած և թեստավորմանը մասնակցելու թույլտվություն ստացած անձը (այսուհետ՝ Մրցույթի մասնակից) թեստավորմանը ներկայանում է անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00-18:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ **2026 թվականի սեպտեմբերի 9-ը մինչև ժամը 17:00-ն**:

Կցվում է թափուր պաշտոնների անձնագրերը, մրցույթի թեստավորման փուլի համար կազմված հարցաշարերը:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները տեղեկություններ ստանալու համար կարող են հետևել azdarar.am և sisian.am կայքերին, իսկ մանրամասն տեղեկություն ստանալու համար կարող են դիմել Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմ /ք. Սիսիան, Սիսական 31, հեռ. (0283) 2-33-30/ և ՀՀ Սյունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն /ք.Կապան, Գ.Նժդեհի 1, հեռ.(0285) 4-42-79/:

Աշխատակազմի քարտուղար՝ Կ. Իվանյան